ԵՐԿԻՐ Press

# Այցելություն Գլաձորի վանք

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը շարունակում է իր հովվապետական այցը Արցախի թեմ՝ հանդիպումներ ունենալով ԼՂՀ իշխանությունների հետ, այցելելով սրբավայրեր ու գյուղեր:

Վեհափառ Հայրապետն այցելել է հռչակավոր Գանձասարի վանք՝ խոնարհվելու Արցախի երբեմնի կաթողիկոսական աթոռի հայրապետների հիշատակի առջեւ: Հայ ժողովրդի համար նվիրական այս սրբատեղին, որ դարեր շարունակ եղել է հայոց հոգեւոր կենտրոններից մեկը, այսօր վերադառնում է իր ամբողջական առաքելությանը: Գանձասարի եկեղեցուն կից սկսվել է դպրատան շինարարությունը, որի ավարտից հետո Հայ առաքելական եկեղեցին կունենա մի նոր հոգեւոր դպրոց՝ իր երկու տասնյակ ապագա հոգեւորականներով: Ամենայն Հայոց կաթողիկոսը Հրաշափառով մուտք է գործել պատմական տաճար եւ Սբ. խորանի առջեւ ծնկաչոք գոհաբանական աղոթք ու մաղթանք է արտասանել Հայաստանի եւ Արցախի զորացման ու շենացման համար: